պատկանում։ Հայրապետն ընդունեց այդ առաջարկը. սակայն բաղանիքից յետ գալուն պէս տկարութիւն զգաց և անկողին մտաւ. հիւանդի դրութիւնն օր ըստ օրէ ծանրացաւ, և մարտի 9-ին նա իւր հոգին աւանդեց։ Մահուան մերձենալը զգալով, նա կանչեց իւր մօտ Էջմիածնից պատգամաւոր եկած Սիմէոն եպիսկոպոսին, խոստովանուեցաւ, հաղորդութիւն ընդունեց և առաւօտեան 9 $^1/_2$ ժամին հանգեաւ ի տէր եղբօր գերդաստանի շրջանում։ Մեռնելուց առաջ նա խնդրեց Սիմէոն եպիսկոպոսին և իւր մօտ գտնուող Գրիգոր վարդապետին՝ անյապաղ Էջմիածին ուղարկել իւր գոյքը, «որպէս զի իւր հոգու վրայ մեղք չմնայ»,—բացի մի փոքրիկ տփից, որ պարունակում էր յատուկ իրեն ընծայուած մի քանի թանկագին իրեր, այդ տուփը նա խնդրեց տալ իւր եղբօրը՝ Սողոմոն իշխանին։ Խընդրեց թաղել իւր մարմինն Էջմիածնում, Սիմէոն կաթողիկոսի գերեզմանին կից։

Զենք յապաղիլ այն զրոյցների վրայ, որոնք մինչև այս օր չեն մոռացուած հայերի մէջ, իբր թէ նա թունաւորուած էր. այդ զրոյցները որ և է իրական հիմք չունին. նրա կեանքը ցանկալի էր նրան շրջապատող անձերին։

Այդպէս աւոյգ հասակում խափանուեցաւ ի Ռուսաստան Հայաստանեայց եկեղեցու առաջին ներկայացուցչի գործունէութիւնը, այն չքեղ ձիրքերով օժտուած մարդու, որ նշանաւոր երախտիք արաւ կառավարութեան և իւր Եկեղեցուն և Ռուսաց միապետների առջև շնորհ ու հովանաւորութիւն վաստակեց ոչ միայն իւր, այլ և թէ ռուսիաբնակ և թէ օտարաբնակ համազգիների օգտի համար։ Նա հաստատեց իւր ամբողջ հօտի գիտակցութեան մէջ այն գաղափարը, թէ հայ ազգի ուղիղ հասկացուած շահերը լիովին համակերպ են Ռուսաստանի շահերին և դրա բարձր կոչման Արևելքում. նա մի պայծառ օրինակ հանդիսացաւ իւր յաջորդների, այն է՝ ամենայն հայոց կաթողիկոսների համար, որոնք նրա գծած շաւղով ընթացան. նրա օրինակով ներշնչուած էր Ներսէս կաթողիկոսը, որ անձնուիրութեան և անձնուրացութեան բազմաթիւ գործեր կատարեց Ռուսիայի տիրապետութիւնն իւր հայրենեաց մէջ հաստատելու համար 1827—29 թ. թ. պարսից ու թիւրքաց պատերազմների ժամանակ, և նմանապէս մեծ պատիւներ ու շնորհ գտաւ Ռուսաց Միապետների առջև և յարգանք նրանց պետական մարդկանցից։

Հայ մատենագրության թուանշային գրադարան